

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2011 թվականի N 1706-Ն

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N 108-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետը և 23-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**։

1. «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1748-Ն որոշման N 5 հավելվածում կատարել փոփոխություն՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1748-Ն որոշման NN 10 և 11 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 5 և 6 հավելվածների:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեից գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 108-Ն որոշման NN 1, 2, 3, 4, 5, 7, 8, 9 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14 և 15 հավելվածների:

4. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Վազաշեն գյուղի սողանքային գոտուց առաջնահերթ վերաբնակեցման ենթակա Դերենիկ Ստեփանյանի բնակելի տան բնակիչների բնակարանային խնդիրների լուծման համար Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին 2011 թվականին հատկացնել 5,456.3 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ կապիտալ դրամաշնորհներ» հոդվածով):

5. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 4-րդ կետով նախատեսված անհատույց պետական ֆինանսական աջակցությունը (այսուհետ՝ աջակցություն) տրամադրվում է շուկայից պատրաստի բնակելի տուն (բնակարան) ձեռք բերելու համար.

2) սույն որոշմամբ ամրագրված աջակցության չափից ցածր արժողությամբ բնակելի տան (բնակարանի) ձեռքբերման դեպքում արժեքների տարբերությունը մնում է աջակցություն ստացող անձի տրամադրության տակ, իսկ ավելի բարձրի դեպքում՝ արժեքների տարբերությունը լրացվում է աջակցություն ստացողի սեփական միջոցների հաշվին.

3) բնակեցումից ազատված բնակելի տունը ենթակա է քանդման՝ սեփականատիրոջ միջոցներով՝ աջակցության միջոցով բնակելի տան (բնակարանի) ձեռքբերումից հետո ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում.

4) աջակցության տրամադրման պայմանների կատարման և տրամադրվող գումարի նպատակային օգտագործման նկատմամբ կողմերի պարտավորություններն ու իրավունքները, ինչպես նաև սույն որոշման 5-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի և աջակցություն ստացող քաղաքացու միջև կնքված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցություն ստանալու մասին պայմանագրով.

5) աջակցության միջոցով բնակելի տան (բնակարանի) ձեռքբերման ժամկետը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի և աջակցություն ստացող քաղաքացու միջև աջակցության տրամադրման մասին պայմանագրի կնքման օրվանից 3 ամիս, բայց ոչ ուշ, քան մինչև 2011 թվականի դեկտեմբերի 20-ը:

6. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին՝

1) սույն որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված աջակցությունը տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի «Ռմբակոծությունների և ռազմական գործողությունների հետևանքով անօթևան մնացած քաղաքացիներին վնասի փոխհատուցման՝ բնակարանային խնդիրների առաջնահերթ լուծման մասին» N 845-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգով սահմանված ընթացակարգին համապատասխան.

2) սողանքային գոտում բնակեցումից ազատված բնակելի տան քանդումից և սահմանված կարգով աջակցությամբ ձեռք բերված բնակելի տան (բնակարանի) գույքային իրավունքների պետական գրանցումից հետո քանդված տանը կից տնամերձ հողամասը փոխադրել պետական սեփականության պահուստային հողերի կատեգորիա:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Տ. Մարգարյան**

2011 թ. դեկտեմբերի 8  
Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1748-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.58 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐԸ

ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները

1.2. Տրանսֆերտներ

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)	ֆինանսական ցուցանիշներ
<i>Օրագրային դասիչը</i>		<i>Անվանումը</i>	
Ը008	ԾՏ01	Աջակցություն ՀՀ Սյունիքի մարզի համայնքներին՝ վարչական օբյեկտների շենքային պայմանների բարելավման համար  <i>Նկարագրություն՝</i>  Պետական անհատույց աջակցություն՝ ՀՀ համայնքների վարչական շենքերի շենքային պայմանների բարելավման համար	
Շահառուների քանակը		1. Տրանսֆերտ ստացող ՏԻՄ-երի քանակը	
Գումարը (հազար դրամ)			X
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը			1000.0
Շահառուների ընտրության չափանիշները			
Վարչական օբյեկտների հիմնանորոգման և կառուցման անհրաժեշտությունը			
<i>Օրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</i>			

Աջակցություն համայնքային, միջհամայնքային, ոչ կառավարական, մասնավոր և այլ կազմակերպություններին ու անհատներին			
<i>Վերջնական արդյունքի նկարագրությունը</i>			
Ծրագիրը կնպաստի ՀՀ համայնքային, միջհամայնքային, ոչ կառավարական, մասնավոր և այլ կազմակերպություններին՝ կանոնադրական նպատակների իրականացման միջոցով ՀՀ քաղաքացիների հանրային և անձնական կարիքների, իսկ անհատներին՝ անձնական կարիքների ապահովմանը			
<b><u>Ծրագրային դասիչը</u></b>		<b><u>Անվանումը</u></b>	
Ը009	ԾՏ01	Աջակցություն ՀՀ Սյունիքի մարզի համայնքներին կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավման համար  <u>Նկարագրություն՝</u>  Պետական անհատույց աջակցություն ՀՀ համայնքների նախադպրոցական շենքերի հիմնանորոգման համար	
Շահառուների քանակը	1. Տրանսֆերտ ստացող ՏԻՄ-երի քանակը	1	
Գումարը (հազար դրամ)		X	15000.0
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը			
Շահառուների ընտրության չափանիշները			
Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգման անհրաժեշտությունը			
<i>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</i>			
Աջակցություն համայնքային, միջհամայնքային, ոչ կառավարական, մասնավոր և այլ կազմակերպություններին ու անհատներին			
<i>Վերջնական արդյունքի նկարագրությունը</i>			
Ծրագիրը կնպաստի ՀՀ համայնքային, միջհամայնքային, ոչ կառավարական, մասնավոր և այլ կազմակերպություններին՝ կանոնադրական նպատակների իրականացման միջոցով ՀՀ քաղաքացիների հանրային և անձնական կարիքների, իսկ անհատներին՝ անձնական կարիքների ապահովմանը			

1.4. Ներդրումներ լիազոր կառավարման ներքո գտնվող պետական կազմակերպություններում

<p style="text-align: center;">Չափորոշիչներ</p>	<p>Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)</p> <table border="1" data-bbox="1525 432 2045 568"> <tr> <td data-bbox="1525 432 1800 523"> <p>ոչ ֆինանսական ցուցանիշներ</p> </td> <td data-bbox="1800 432 2045 523"> <p>ֆինանսական ցուցանիշներ</p> </td> </tr> <tr> <td data-bbox="1525 523 1800 568"> <p>տարի</p> </td> <td data-bbox="1800 523 2045 568"> <p>տարի</p> </td> </tr> </table>		<p>ոչ ֆինանսական ցուցանիշներ</p>	<p>ֆինանսական ցուցանիշներ</p>	<p>տարի</p>	<p>տարի</p>
<p>ոչ ֆինանսական ցուցանիշներ</p>	<p>ֆինանսական ցուցանիշներ</p>					
<p>տարի</p>	<p>տարի</p>					
<b><i>Ծրագրային դասիչը</i></b>						
<p>U001</p>	<p>ԵԿ02</p>	<p><u>Անվանումը</u>          Կրթական օբյեկտների հիմնանորոգում  <u>Նկարագրություն</u>          Ներդրումներ ՀՀ Սյունիքի մարզպետի կառավարման լիազորությունների տակ գտնվող կրթական օբյեկտների շենքերի կապիտալ վերանորոգման նպատակով</p>				
<p>Ծախսերը (հազար դրամ)</p>	<p>X</p>	<p>5000.0</p>				
<p><i>Կազմակերպությունը, որտեղ կատարվում է ներդրումը՝          ՀՀ Սյունիքի մարզպետի ենթակայության թվով 1 կրթական օբյեկտ</i></p>						
<p><u>Ներդրման հիմնավորումը, մասնավորապես, ազդեցությունը կարողությունների վրա՝</u></p>						
<p><i>Քանակական, որակական, ժամկետայնության և այլչափորոշիչների փոփոխության վրա՝</i></p>		<p>Հիմնանորոգումն անհրաժեշտ է, որպեսզի դրանք ապահովեն ծառայությունների մատուցումը գործող չափորոշիչներին համապատասխան անհրաժեշտ ծավալով և որակով</p>				

<i>Ծախսային արդյունավետության բարելավման վրա</i>	-	-	-
<i>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</i>			
Ը002 Հանրակրթական ծառայություններ. ՀՀ Սյունիքի մարզպետարան			
<i>Վերջնական արդյունքի նկարագրությունը</i>			
Կրթական օբյեկտների հիմնանորոգված շենքեր և մասնաշենքեր			

**1.6. Հանրության կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվներ**

**1.6.1. Հանրության կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվներ**

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)	
		ոչ ֆինանսական ցուցանիշներ	ֆինանսական ցուցանիշներ
		տարի	տարի
<i><b>Ծրագրային դասիչը</b></i>	<i><b>Անվանումը</b></i>		
Կ003	Ա.201	Տեղական նշանակության ճանապարհների և կամուրջների հիմնանորոգում <i><u>Նկարագրություն՝</u></i> Ավտոճանապարհների քայքայված ծածկի նորոգում, մաշված ծածկի փոխարինում	
Քանակական			
Որակական			
Տվյալ տարվա պետական բյուջեից ակտիվի ձեռքբերման, կառուցման կամ հիմնանորոգման վրա կատարվող ծախսերը			(21000.0)

(հազ. դրամ)			
Ակտիվի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	(21000.0)		
Տվյալ բյուջետային տարվան նախորդող բյուջետային տարիների ընթացքում ակտիվի վրա կատարված ծախսերը (հազ. դրամ)			
<i>Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը</i>			
<i>Ը001 Տարածքային ծառայություններ. ՀՀ Սյունիքի մարզպետարան</i>			
<i>Վերջնական արդյունքի նկարագրությունը</i>			
<i>Բնակչության կենսական պայմանների բարելավում</i>			